


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
 Ե. ԲՈՐՈՍՅԱՆ
 Եամակ կամ որ եւ է
 գրութիւն պէտք է ուղղել առ
 Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ րազրի
 ԳԱՀԻԷ (Եգիպտոս)



ՔԱՂԱՆՈՐԴԱԳՈՎՈՒՄԷՆ
 ԵԿԻՊՏՈՍԻ ՉԱՄԱՐ
 Տարեկան ողջ ջրակին. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆԻ
 Տարեկան Բրակի 20
 Վեցամսեայ » 12

E. TOROSSIAN
 Direc. propr. du journal arménien
 ARCHALOUYCE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՎԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԷՆ ԿԱՆՈՒԿ
 Եւ թղթատարի ծախքը
 Խնայարարական վրայ է:
 Խնայարարական ուղղուած
 գրութիւնքն էս Եւնիւրիւր
 *
 ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԷՐ
 Կարելի է լսարեւի Եւ

ԵՄՔԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժնա-
 նորդներէն ջերմաստի կը խնդրուի որ բա-
 րեկանին նախորդ տարիէն մնացեալ պար-
 տաց կցեղով որկել նստել իրենց ԵՐԿՐՈՐԴ
 Տարեցրջանի բաժնակիրացիներ, եւ հարկ
 չը քողոյ մասնաւոր դիմումներու, որով
 նոր դժուարութիւն մը պիտի ունենան ԱՐՇԱ-
 ՆՈՅՍ արդէն բազմազարդ Տնօրինութեան:

ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ

(Շարն. նախորդ թիւէն եւ վերջ)



Դառնանք վայրկեան մըն ալ ուրիշ
 հաստատութեան մը, որը կազմակերպուած
 է իր վերջնական ձևը առած է արդէն:

Ատիկա վարժարան չէ՛, որբանոց չէ՛,
 եկեղեցի չէ՛, ազգային ունէ հաստատութիւն
 մը չէ՛ մէկ խօսքով: Սա՛ պարզ ազգութե-
 րործարան մըն է. և եթէ ազգային բնու-
 թիւն մը կուտամ ատոր, պատճառն այն
 է որ, Հայեր, մեծաւ մասամբ գաղթական
 Հայեր, Կիպրոսի պէս ազգաստ, և իւրովը
 հազիւ հազ տապկուող երկրի մը մէջ ան-
 գործ և թշուառ մնալու վտանգէն ազատ
 կ'աշխատին և կ'ապրին պատուաւոր կեր-
 պով:

Հայ արուեստագէտ մը, Պարոն Յա-
 րութեան ձերմակեան, հիմնած է այդ ա-
 զորիքն Կիպրոսի մէջ: Ուրախալի է նշա-
 նակել թէ՛ Պարոն ձերմակեան մին է այն
 սակաւաթիւ արուեստագէտներէն, որոնք
 իրենց կարողութեան ամբողջ գիտակցու-
 թիւնը քաջ ըմբռնած ըլլալով հանդերձ
 պարզ և խոնարհ ըլլան որպէս հասարակ
 արուեստաւոր...:

Գործարանը կառուցանողը, մեքենա-
 ները բերել տուողը, մէկ խօսքով մեծ
 մասամբ գրամագլուխը գնողը, հարուստ
 Կիպրոսցի Յոյն մըն է:

Յայտնի է մեզ յունաց մտեւանդու-
 թիւնը գէպի իրենց կրօնն ու ազգութիւ-
 նը, և առ Հայութիւնն տածած ատելու-
 թիւնը: Ինչպէս Պ. ձերմակեան յաջողած
 է իր ազգեցութեան տակ առնուլ այդ մո-
 լեռանդ յոյնը, մի առ մի հեռացնել յոյ-
 ները և գործարանը լեցնել Հայ բանուոր-
 ներով, ահա՛ հոս է խնդիրը, որը ուրիշ
 գաղանկի չունի, բայց եթէ իր, և իր

օգնական Հայ ընկերներուն ցոյց տուած
 ուղիդ, անկողծ, և հաւատարիմ նկարա-
 գիրը, ինչ որ յարգանք և անասման վրա-
 տահութիւն ներշնչած է յոյն գործարան-
 նատիրով և մանաւանդ Սէր գէպի իր Հայ
 ընկերները:

Սակայն աւելի գեղեցիկ, աւելի վեհ
 թախ մը կայ Պ. ձերմակեանի նկարագրին
 մէջ, այն է՝ իր անձնական շահերուն միշտ
 ամենէն վերջին տեղը տալ, և ամեն բա-
 նէ առաջ՝ ընդհանրապէս շահը միայն ի նը-
 կատի ունենալ: Մերժել ամեն տեսակ շա-
 հաւոր առաջարկներ, երբ կրնան զրաւել
 ատենք իր մարտը և ուղիդ մարտու համ-
 բախն: Իր գոհունակութիւնը ու երջան-
 կութիւնը փնտռել ընդհանուրին գոհունա-
 կութեանն ու երջանկութեանը մէջ, ինչ
 որ այս կոպիտ և նիւթապաշտ դարուս հա-
 մար հազուադէպ երեւոյթ մըն է:

Կը պատմուի թէ գեռ Պ. ձերմակե-
 ան ազօրիքը չ'հիմնած՝ տեղական հացը
 աւելի քարի և անմաքուր նիւթերու շաղ-
 ութք մըն էր՝ քան թէ ալիւրի. Կիպ-
 րացին Պ. ձերմակեանի կը պարտի այն
 մարտը ալիւրը ճերմակ ու փափուկ հացը՝
 զոր պտղովանք կուտէ այսօր:

Ինչպէս քիչ մը առաջ յիշեցի, Պ. ձեր-
 մակեան Հայ գործի ընկերներ ունի, որոց
 հետ կապուած է և՛ անկողծ բարեկամու-
 թեամբ: Երբ անձնասէր և էնդրիկան
 մարդկութիւնը քիչ շատ մօտէն ճանչնալով
 ալ գրեթէ քիչ անդամներ կը հաւատարի
 բարեկամութեան, անհուն հրճուանք մը,
 բերկրութիւն մը զգացի տեսնելով այդ
 երեք կամ չորս ընկերները իրենց ընտա-
 նիքներով, որոնք այնքան ճշգիւ կը ներ-
 կայացնեն մանրանկարն անհունապէս բազ-
 ձալի այն ազգայն «Համայնքին» որոյ ան-
 դամները — ինչպէս կը սիրենք հաւատալ —
 սիրոյ և փոխադարձ համակրութեան կա-
 պերով միայն պիտի կապուին իրարու, նիւ-
 թական ունէ շահ գոյութիւն պիտի չունե-
 նայ քնաւ, դա՛ իր տգեղ նշանակութիւնը
 պիտի կորսնցնէ բոլորովին, և միահամուռ
 պիտի դաւանին սա բարձր ու պաշտելի
 սկզբունքը. «Ամէնքը մէկի՛ և մէկը՛ ա-
 մենքի համար»: Սիրել զիրար, զոչնչիլ
 իրարու համար, և փոխարէն մէկ բան մի-
 այն ակնկալել և պահանջել իրարմէ, այն
 է՝ Սիրս:

1900 Դեկտ. 1
 Նիկոսիա (Կիպրոս)

ՄՍՈՒ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԵՐՈՒ ԿԵԱՆՔԵՆ

Ասկէ քանի ամիսներ առջ Պարոյն Հայ
 թերթերը հիացուածով կը կախին Փարիզի Հա-
 յութիւնը, որ կրցած էր վերջապէս շուրջնա-
 րութիւն մ'ընել իրեն հովիւոր հովիւ կարգելով
 Տէր Վրասապուհ քահանայն որուն անցիւնը
 ազգասէր զգացումներուն միանալով նոսիւ Փա-
 րիզի Հայերուն աջակցութիւնը պիտուենան
 մեծ, շատ մեծ եկեղեցի մը որ պարծնաքը ըլ-
 լայ Հայութեան:

Բայց, Փարիզի ո՞ր Հայութեան համար
 շինել կուզեն արդեօք այդ վաճառաքի նկարագրին,
 եւ կամ ո՞ր դասակարգին աջակցութեանը ապա-
 ւինելով յաջողութիւն կը մտածէին այդ ձեռ-
 նարկին:

Եթէ ազնուակեցական դասակարգին հա-
 մար է, (Փայաներու, Պէյերու եւ ազնուակաջ
 Տիկիներու) որոնք պակաս չեն Փարիզի մէջ,
 պարագայ բան (?). Անոնք ո՛չ եկեղեցի կ'երթան
 եւ ո՛չ ալ փափաքող են եկեղեցի ունենալու:

Գիշերը միջին սոսաւոն Շան գ'էլիլի եւ
 Կրան Պարլիստի փառաւոր գրասովորի կը կամ
 չբեղ երկզքի մէջ անցնել անկողն, առեւ-
 ւտուի ալ եկեղեցի երթալ կամ պատր վրայ
 մտածել յիմարութիւն չէ՛:

Մանաւանդ, այդ դասակարգը բոլորովին
 ֆրանսացիացած՝ կը խօսի ֆրանսէիէն, կը
 կարգայ ֆրանսերէն ու եթէ պատահամբ ունէ
 երկրորդ մէջ հանդիպել իրենց, չէ մէկ, այլ
 քանի մը վկայներ պէտք են անոնց հայութիւնը
 ստուգելու համար ու եթէ հարկ ըլլայ տա-
 րին անգամ մը եկեղեցի երթալ, ուրիշ
 ֆրանսական փառաւոր եկեղեցիներու զոները
 կ'անակի վրայ բաց չեն իրենց առջև:

Իսկ եթէ կէս ազնուակեցական դասակար-
 ցին համար է, զոր օրինակ, Էջմիածնի, Զօ-
 րանի, Մարկոսեան եւ նմաններ, ատենք ձգ-
 տում մ'ունին միւսներուն նմաներու եւ միջակ
 ու ստորին դասակարգին բնաւ կարեւորութիւն
 չեն տար, միջինին իրենք աւելի գաճաճներ են
 քան ստորին կարծածներն, ուղիով ալ, Պարզով
 ալ ու սրտով ալ, եւ որոնք Կաղաքական Ժո-
 դովի պետերը եւ Բարեկրթականի ու Ազգա-
 տախնամի կազմակերպիչներն են, մերթ ընդ
 մերթ յուզուած Հայրենասիրի հովեթով իրար
 կ'անցնին, փէշերնին սօթած ասորի անցին
 կը վազուրստեն Ժողովուրդ կը գնձարին, սպա-
 նելով սակայն որ բոժծը կախող մը գտնուի:

Եւ իրաւ ալ, բոժծը կ'ախողը չպակսե-
 ցաւ Ազգաքանդը Մանթաշօքը այդ ծանր պար-
 տականութիւնը իր վրայ առած է, մէկ միլիոն
 ֆրանքի ահապին գումար մը յատկացնելով այդ
 նպատակին ու վերջապէս Հայերն ալ Փարիզի
 մէջ պիտի ունենան իրենց փառաւոր եկեղեցին:

Սակայն ազնուակեցական Պարոնը, շատ աւել-
 ի սիրուն բան մը քրոնք կ'ըլլար, փոխանակ
 այդպէս մեծ գումար մը յատկացնելու միմիայն
 եկեղեցիի մը շինութեան, կէսով գոհանար,
 որով դարձեալ համեստ մատուռ մը կարելի էր
 ունենալ, ու մնացած կէսն ալ յատկացնէր բա-

րենպատակ հաստատութեան մը, զոր օրինակ զործարան մը, ուր կրնային քանի մը հարիւր խեղճեր պատասպարուել ու թշուառ չ'ըլլալ եւ հասոյթը յատկացուելով դարձեալ եկեղեցիին եւ կամ ուրիշ բարեկեցական, մէկ քարով երկու թռչուն զարնուած կ'ըլլար եւ աղնուսիրտ Պարոնը ատով աւելի անմահացուցած կ'ըլլար ինքզինքը, քան թէ իր անունը եկեղեցիի մը ճակատը գրել տալով (*):

Իսկ Փարիզի Հայերը դեռ անտարբեր պիտի մնան. նախատինք չէ՞ իրենց միշտ ուրիշէն սպասել, եթէ չեն կրնար Մանթաշօֆ մը ըլլալ, գոնէ չպիտի ուզեն անոր հետեւել ու ձեռնարկել ալեւայլ բարենպաստ կազմակերպութիւններու եւ մինչ ցարդ իրենց ճակտին վրայի արատը մասամբ սրբել. այսչափ տարբերներէ ի վեր կարող չէին միթէ մատուց մը շինել եւ այդ պահալի խանութէն ազատել. կարծեմ շատ աւելի լաւ է մատուց մ'ունենալ քան թէ չենք մը գետնայարկի մէկ երկու սենեակները եկեղեցիի վերածել, եւ ինչ հարկ կայ փառաւոր եկեղեցի շինել օտարութեան մէջ:

Ուրեմն ինչո՞ւ այսչափ յետադիմութիւն, Փարիզի Հայերուն մէջ, ամէն բարենպաստ ձեռնարկներու համար: Բարեգործական եւ Աղքատախնամ մ'ունին, որուն Գանձապահը ութ ամիսէ ի վեր հրաժարած՝ Ատեֆանպետը անտարբեր, անդամները բնաւ լուր չունին, իսկ հաշիւ պահանջող երբէք չկայ. այսչափ ալ անհագութիւն: . . .

Հապա քահանան, այդ պահալի աղտոտ հաշիւներով թաթխուած ջրերու վտանակին մէջ դատապարտուած է ամէն բարի զգացում խեղճի իր մէջ եւ տառապող ազգին վրայ թափած արցունքները հալած կապարի պէս կ'իջնեն սրտին վրայ ու արիւնի վտակներ կը հոսեցնեն հոն:

Ինչո՞ւ քահանայ, կ'երեւի Սեբաստիոյ վանքին մէջ չիլին պակաս կրած էր չու եկաւ Փարիզ ամբողջացնել զայն:

Անցարդ մը Փարիզէն Մ. ՄՈՁԵԱՆ

(*) Պարոն յօղուածագիրը իրաւունք չունէր անհատի մը հարստութիւնը մատակարարելու միջոցներ դաս տալ: Պ. Մանթաշօֆ բոլորովին ազատ է իր ուզած եղանակաւ բարիք գործել, զոր օրինակ, եկեղեցի կառուցանել, վարժարան հիմնել, գործատուն ունենալ եւ աշխատանքներ լիւրժի կերակրել: Միթէ Մանթաշօֆ մինչեւ ցարդ հազարաւոր ընտանիքներ բարեբաստ ըրած չէ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Ն Ի Լ Ը Վ Ե Ր Տ Ի Յ Է

ՕՐՈՒԱՆ ՄԸ ԱՄՈՒՄԱՑԵԱԼԸ

(Շտաբ. նախորդ օրիւն եւ վերջ)

Բ.

Կոմսը վարկեան մը ահանջ դրաւ անոր, այդ անդին չեկող ձայնով օրորուած, որ իրեն համար արդէն եղած բանի մը արձագանքը ունէր:

Օրը վարդագոյն եղաւ, ժամացոյցը ծանր ծանր բաժանման ժամը զարկաւ:

Սէրժ քաջութիւնը չ'ունեցաւ զայն իր երջանիկ երազէն արթնցնելու, որ անոր անուշ բանդազուչանքը կ'երկարէր, վախնալով հետեւելիք պատրանքէն. հաղիւ համարձակեցաւ բերանը անոր ծաղկափթիթ շրթունքներուն դրուցնել եւ հեշտալից « մնաս բարո՛վ » մը մըրմնջելով, անկէց յաւիտեանս հեռացաւ:

Գ.

Քասնեմէկ տարի անցաւ այդ օրէն, Հարիւրապետ Տը Բլօօֆ, զօրավար եղած էր եւ Սէպասթաբօլի ամբուստեանց ճակատը կը հրամայէր:

Իրիկուն մը իւր բանազնաց զրկուած Ձուալներու երիտասարդ սպայի մը այցելութիւնը ընդունեց:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բէքին 1 Յունուար. — Պարոն Գէթիլէրի սպաննիչը գլխատուեցաւ:

Քար 1 Յունուար. — Գաղթավայրին կառավարութիւնը 27 գաւառակներու (Քաբն ալ մէջը աւանելով) հաւատարմականներուն (լուսեալիսթ) կոչում ըրած է զինուորական իշխանութեանց օգնել, վարձկան գունդ մը կազմելով արշաւանքը ետ մղելու համար:

200 Պօէրներ Ռօզմէտի մօտ կառախուց մը կեցուցած է այրած են: 60 գաղթավայրի զօրքեր՝ որոց 4 ը վիրաւորեալ, գերի բռնած են, որք կառախուսում կը ճամբորդէին: Քիչ մը յետոյ այդ 60 գերիները ազատ արձակուած են:

Լոնտոն 1 Յունուար. — Նօքս զօրավարը որ Տը Ուէթը կը հալածէր, 5 պաշարակառք եւ 6000 գնդակ առած է: Ձօրավար Ֆրէնչ ալ պաշար ձեռք ձգած է: Պօէրները Գուրուամանի մօտ կառախուսում կը բռնեցին որ 50000 Անգլիական ոսկիի բան կը փոխադրէր:

Թրանսիլա 2 Յունուար. — Հէլլէտիայի կռուին համար Լորտ Գիչնէր հետեւալը կը հեռագրէ:

Պօէրները առտուան ժամը 2 ու կէսին յանկարծակի բերին Հէլլէտիայի պահակախումբը եւ յարձակմամբ առին 4-7 զնդաչափնոց թնդանօթ մը, բոլոր ումբաձիգներով: Քիչ մը յետոյ մեր զօրքերը կրցան թնդանօթը ետ առնել. բայց վերջի վերջոյ Պօէրները թնդանօթը վերցուցին Անգլիացի գերիները չորս կողմը շարելով: Պօէրները ուղամթերք չառին. 4 սպայ վիրաւորուած, 11 զինուոր սպանուած եւ 22 վիրաւորուած են: Մաշտատօրքէն գունդ մը, Հէլլէտիայի օգնութեան զրկուած է բայց ճամբաներուն գէշ վիճակին համար ժամանակին հասած չէ:

Լոնտոն 2 Յունուար. — Պօէրները դ'պի Ֆրէզըրպուրկ եւ Պօֆօր Ուէսթ յառաջանալով Քաբի գաղթականութեան մէջ գտնուած ազարակները կը թալլեն:

Այս երկու մարդոց տեսակցութիւնը կարճ բայց շատ սրտատուչ եղաւ:

— Սպայ ըլլալու համար դեռ շատ երիտասարդ էք — ըսաւ անոր զօրավարը:

— 20 տարեկան եմ Ձօրավարդ իմ եւ հալիւ երկու օրէ ի վեր ֆրանսայէն եկած եմ:

— Անունիդ ի՞նչ է խնդրեմ:

— Սէրժ Տալիդ:

Տը Բլօօֆ կ'ամբ տեղէն ընդոտ ցատկեց:

— Սէրժ Տալիդ, բացազանչեց ժէրմէն:

Տալիդի զաւակն էք:

— Այո՛, զօրավարդ իմ:

— Իսկ ես Սէրժ տը Բլօօֆ կոմսն եմ, մայրերնիդ անունս սորվեցուցած չէ՞ ձեզի:

— Տղայութեան ինձի սորվեցուցած է ձեզի համար աղօթել — պատասխանեց Ձուալներու փոխ-տեղակալը խոր յուզումով մը — եւ սիրունիդ մոռցած չ'եմ. մայրս ամեն բան չ'ըսաւ բայց կարծեմ կը գուշակեմ . . .

— Մայրդ կ'իմա եղած է — յանկարծակի ընդհատեց զօրավարը, եղակի դէմքով խօսել ըսկսելով երիտասարդ սպային հետ — Ձուրցերիայ ամուսնացանք, Կաթոլիկ քահանայ մը մեզ պըսակեց, բայց ամուսնութեան յաջորդ օրը ստիպուեցանք իրարմէ զատուել:

Մեր երկրին մէջ մեր հոգւոյն տէրը չենք, սիրտս հայրենիքիդ մէջ ձգեցի, ես քու յայրդ եմ Սէրժ Տալիդ, եւ ինքզինքս հպարտ կ'զգամ ֆրանսացի սպայ մը զաւակ ունենալուս: Օ՛ն, տղաս ետ դարձիւր եւ ըսէ քու կ'իմանա՞րդ որ կըրնան գալ ու իրենց մեռելները թաղել: Վաղը անշուշտ կրակի մկրտութիւնը պիտի ընդունին:

« Տէյլե Մէյլ » կ'իմանայ Քաբէն թէ երկու ուրիշ գոմմանտօ ալ Քաբ մտած են, հիմա արշաւողներու թիւը 5000 ը կ'անցնի:

Լորտ Ռօզմէտ կոմսութեան տխուրսը եւ ծնկակապի աստիճանը ստացած է:

Լահէյ 2 Յունուար. — Քրիկէր անկողնոյ կը ծառայէ. ցնցատապէ բռնուած է:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՍՏԻՆԻ ԺՈՂՈՎ. — Չորեքշաբթի օրը Ազգ. առաջնորդարանի մէջ ընդ Ատենապետութեամբ Ն. Վ. Տիգրան փաշայի, գումարուած է Պատկ. Երեսփոխանական Ժողովը:

Ժողովոյ սոյն նստին մէջ Առաջնորդ եւ Ժողովական կարեւի եղածին չափ զիրար հասկնալէ եւ ճանչնալէ վերջ, նկատողութեան առնուած է վարժարանի անկերպարան վիճակը:

Երկար վիճարանութիւններէ յետոյ Պատկ. Ժողովը իւր անդամներէն Տ. Նշան Մալումեանի պաշտօն տուած է, վարժարանը, վարժարան անուան համապատասխանող վիճակի մը մէջ գնելու համար ամեն պէտք եղածներն ընել եւ առ այս հարկ եղած ծրագիրը ներկայացնել Պատկ. Ժողովոյ:

Պատկ. Երեսփ. Ժողովոյ ներկայ որոշումը շատ ուրախութիւն կը պատճառէ մեզ, որ վերջապէս աչքէ ու երեսէ ձգուած ազգային վարժարանին վիճակը իրապէս բարւոքելու համար պէտք եղած միջոցները ձեռք կ'առնէ:

Այս էջերուն մէջ արդէն վարժարանի մասին բաւական նկատողութիւններ եղած են, եւ քանի որ Պատկ. Երեսփ. Ժողովը ալ այս անգամ իւր որոշումով մեր ըսածները կը հաստատէ եւ համաձայն կը գտնուի մեզ, հարկ է որ յետ այսու ալ այս խնդիրը ամենէն շատ զբաղեցնէ զմեզ:

(առաջին անգամ կրակ պիտի տեսնաս) որովհետեւ գիտեմ որ պաշարող բանակը ընդհանուր յարձակում մը կը պատրաստէ մեր գերքերուն վրայ. պարտականութիւնդ կատարէ՛ ինչպէս որ ես իմինս պիտի կատարեմ: Եթէ քու առջեւ գտնուիմ, մոռցիր որ մայրդ սիրտս կը կրէ եւ դուն ալ արիւնս:

Երիտասարդ սպան ձեռքերը աչքերուն տարաւ արցունքները ծածկելու համար:

— Օ՛ն զաւակս, գրկէ զիս ու մեկնէ, յարեց զօրավարը . . . մնաս բարով Սէրժ:

Կոմսը իր հակայի թեւերը բացաւ եւ անօրուս սպան հօրը բազուկներուն մէջ նետուեցաւ: Ապա կամքի բռնու ճիգով մը հօրը գրկախառնումէն ազատեցաւ, միակ գրկախառնում, որ քան տարուայ առաջուան Լիւսէրնի պանդակներ կը յիշեցնէր. շուտով կոմսը առանձին մնաց:

Օրը կը մթննար:

Չօրավարը հրաման զրկած էր կրակը դադարեցնել իր հրամանատարութեան տակ գտնուած ամբողջ հասածին վրայ: Խոր լուսութիւն մը մէկէնիմէկ յաջորդած էր թնդանօթի ու հրացանի որոտներուն եւ կը սաւառնէր համայն քաղաքին ու դաշտին վրայ:

Ժամացոյցը ժամը զարկաւ, գուցէ շատ մը երիտասարդներու վերջին ժամը, որոնք առանց իրարու դէմ ին ունենալու, ստանց մօտալուտ մահուան վտիւր զգալու, կը պատրաստուէին կոտորածին:

Չօրավարը նախազգացում ունէր որ փառաւոր մահերու հրեշտակը իր սեւ թեւով ընդհուպ իրեն պիտի դպէր. որպէս յայցելութիւն:

ՆԱՄԱԿ ԲԱՐԻՁԷՆ

Փարիզ 24 Դեկտ. 1900

ՊՕԷՐՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ . — Փարիզի էմբրաս- սիման թերթին խմբագրապետ, յայտնի Հանրի Ռոչֆորը նամակ մը գրած է Պօէրներուն օգնու- թեան գալու համար, որուն թարգմանութիւնը զրկուած է աշխարհի ամենամեծ թերթերուն բաց ի սակայն անգլիերէններէն :

Պ . Հանրի Ռոչֆորը կ'առաջարկէ բոլոր ազ- գի խմբագրապետներուն որ բարեհաճին իրենց հաւանութիւնը տալ միջազգային կամ համաշ- խարհային մամուլի գոնկրէս մը կաշաքնելու Եւրոպայը (Արեւմտեան) մեծ քաղաքներէն միոյն մէջ : Մամուլի ներկայացուցիչներու այս հա- մաժողովին մէջ պիտի որոշուի թէ ինչ կերպով պիտի կարենան իրապէս օգնել Պօէրներուն որ- պէսզի անոնք կարենան իրենց անկասկածելի ձեռք բերել . պիտի լինի նաեւ հանգանակու- թիւն մը, որն Պ . նամակագիրը յոյս ունի թէ շատ մեծ գումար մը պիտի հաւաքէ, եւ որ պի- տի ուղարկուի Պօէրներուն :

Պ . Ռոչֆորը կ'ըսէ թէ պէտք է յոյս դնել կառավարութիւններուն վրայ, որոնք անկարող են բան մը ընելու եւ եթէ կարենան իսկ չ'պի- տի ընեն . ուրեմն պէտք է որ ժողովուրդը կ'ար- գագրէ Պօէրներուն խնդիրը : Ուստի կը խնդրէ յարգելի խմբագիրներէն, որ բարեհաճին իրենց հաւանութիւնը եւ միութեանը խօսքը զրկել կնքականի խմբագրութեանը՝ Բարիզ :

Մ . Ս . ԴԱԻԻԹ ԲԵԿ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ազգատանամ Ընկերութեան Ընդհ. Ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիւ- րակէ 6 Յունուար 1901 յէս օրէ առաջ, եկեղեցական արարողութենէ անմիջապէս յետոյ, ազգային մանկապարտէզի սրահին մէջ, օրակարգ ունենալով՝

1. Վեցամեայ հաշուետուութիւն Գործ. Ժողովոյ :

Դիւանա կը սիրէ յուսալ թէ՛ Պատ. անդամք պիտի փութան ներկայ ըլլալ սոյն նստին որ՝ մանաւանդ սօնական օրերու մերձեցման առթիւ, մանաւորսպէս խոր-

նը, այն սրբուոյն, որ այնչափ սիրած էր եւ որ միայն ժէրմէնի նամակներովը կը ճանչնար, ի- րեն այն պահուն երկնային գթութեան մէկ շը- նորքը կ'իբեւար գերազոյն փորձէն առաջ : Ամ- բող զիշերը ռաբի վրայ անցուց, զիբերը քնն- նեց, իր մարդոցը քունը հսկեց եւ երբոր արշա- լոյսը սփռունեցաւ երկնքի վրայ, անոնց օղի բաժնեց առատութեամբ, իբր մահուան հաղոր- դութիւն :

Աստղերը մարելուն պէս պաշարողներուն թիւդանթները գոռալ սկսան, բերքին ամրու- թիւնը ծակծկելով, ապա պղինձէ բերանները լոնցին ու յարձակումը սկսաւ :

Կատաղի գիւղերգիւտան կուի մը . սուրն- ները կուրծքի կը փորէին . գնդակները մար- միններ կը ծակէին ու դէմքեր կ'այրէին : Երկու ազգերու ... անտելի կուրծք կուրծքի կուիւր, արշալոյսի բացուելուն, առաւօտեան ցօղին սակ, ստիպելի տեսարան մը կը ներկայացնէր :

Զուգակերտ առաջին գունդը — Սէրժ Տա- լիզինը — յարձակող գունդին գլուխն էր : Առա- ջին շարքը մոլեգին խառնուրդին մէջ երիտա- սարդ սպայ մը՝ համազգեստը հովին ու գնդակ- ներուն բացած եւ ծնկակարթը լարուած կը յա- ռաջանար իր շնագայլերուն (1) ցուցնելով պատ- նէշին զատիվները, որ պէտք էր վերելակել :

Ինքը օրինակ տալու համար, ամենէն ա-

(1) Ենազայլ (Ենգայ) կը կոչուին Զու- ալները՝ իրենց ճարպիկութեան եւ յարձակման ժամանակ շնագայլի նման ձայն հանելուն հա- մար : Զուգակերտ գունդերը Ֆրանսայի ամե- նակարիճ գունդերն են :

հրդակցութիւնք տեղի պիտի ունենան աղքատաց ըստ կարելոյն նպատամատոյց ըլլալու ձեռնարկուելիք միջոցներուն հա- մար :

Ի դիմաց Ընդհ. Ժողովոյ Ազգատա- խնամ Ընկերութեան Ատենադպիր Ատենապետ Հ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Լ. ԿԻՒՄԻԻՇԵԱՆ

ՅԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 4 ՅՈՒՆՈՒԱՐ 1900

9355	3914	6637	9752	9999	5651
892	7718	2652	1131	4106	348
5631	319	9757	1430	1972	2569
4663	870	6367	5816	4497	1448
		5899	8457	5848	

ՓՈՒՍՏՈՒՈՒԹԻՒՆ ԳՐԱԽՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Մեր Հայ սեղանաւորներուն ուշադրու- թիւնը կը հրաւիրենք «Փուռնալ Օֆֆիսի- էլ»-ի մէջ հրատարակուած հետեւեալ հրո- վարտակին վրայ :

«Ասկէ ետքը արգիւտել է առանց կա- ռավարութեան հրամանին գրաւով փոխա- տուութեան տուներ հիմնել : Սակայն և այնպէս այս ներկայ հրովարտակին կիրար- կութեան տակ չեն իյնար անմարմին գրա- Վի փոխատուութեան հաստատութիւնները բաժնեթուղթ (աքսիոն), արժեթուղթ (օպիլիկասիոն) ևայլն, նոյնպէս անոնք որ նոր ապրանքի և ուտեստեղէնի վրայ փո- խատուութիւն կ'ընեն :

«Արտօնութիւնը ներքին Գործոց նա- խարարութեան կրնայ տրուիլ որ կարող է ուզած ժամանակը այդ հաստատութիւնները քննել : Քննիչները կրնան սօմարները նը- կատի առնել և ճշգրէ գրաւներու հաստա- տութիւնը և տեսնել թէ օրէնքի հրամա- յած պատուէրները և արտօնագրին կանոն- ները ճշգրի կը գործադրուին :

«Եթէ խանութիւն տէրը օտարահպատակ է, իր Հիւպատոսարանին կանխաւ իմաց պիտի

առջ նետուեցաւ խարխուլ քարերուն ու փլա- տակներուն մէջտեղ եւ մահացու վիրաւորեալ զրօշակակիրին ձեռքէն եռագոյն զրօշակը խը- լով մարտկոցին կասարը հասաւ :

Նոյն վայրկեանին մըրիկի նման թշնա- միները վազեցին եւ զայն շրջապատեցին :

—Դրօշակը, ընկերներ, պոռոց երիտա- սարդ սպան զօրաւոր ձայնով մը, եւ ահա ա- մէն կողմէ Զուգակերտ խոյսացան ու սուրին հար- ուածներով արեւնազանգ ճամբայ մը բացին Ռուսերուն մէջտեղէն :

Բայց Հիւսիսի բերտ հետեւակները՝ աւելի մեծ թուով վրայ ինկան ու Զուգակերտ փօսին մէջ թափեցին : Ենազայլերը հազիւ հազ կըրցան իրենց ծուրի ծուրի եղած զրօշակը ազատել եւ իրենց վիրաւորներն ու մեռելները պատնէշին վրայ ձգելով ետ քաշուիլ, կրկին յարձակելու համար :

Միայն փոքրիկ խումբ մը փոխ-տեղակալի մը հրամանատարութեան տակ գեռ իրեն դերքը կը պահէր գառովներին եզերքը : Սէրժ Տալիզ զրօշակը օդնականի մը յանձնած էր, որոշելով նախադաս համարիլ սպաննուելի՝ քան թէ գրա- ուած տեղ մը կրկին ետ տալ :

Այս միջոցին Տը Բլօֆօֆ զօրավարը մարա- կոցին օգնութեան կը վազէր, կայսերական պահակներու գումարտակով մը, փրատակներու ձաղարին մէջ նետուելու համար արդէն գնդակնե- րով ծակծկուած ափ մը քաշերը : Զօրավարը փոքրիկ խմբին մէջտեղը նետուելով թեւէն բըռ- նեց երիտասարդ սպան, զայն գերի ընելով կեանքը ազատելու համար :

տրուի, որպէսզի եթէ հարկ դատէ, ներ- կայ գտնուի քննութեան :

«Միւստին ժամանակ որ դրամը կը տրուի, պէտք է որ փոխառուին ընդու- նագիր մը՝ տրուի սրն որ պէտք է հետեւեալ զեկուցումները պարունակէ . 1. փոխ տրու- ուած գրամ : 2. գրաւին մանրամասն նը- շանակը : 3. գրաւին գնահատութիւնը : 4. փոխատուութեան պայմանաժամին թը- ւականը :

«Ամէն աւանդատու պարտաւոր է ա- ւանդ տրուած առարկային թուղթը ստո- բագրել, իսկ եթէ աւանդատուն գրել չգիտեր, այն ժամանակ երաշխուսը պի- տի ստորագրէ :

«Այս վերի ձեակերպութեան բացա- ութիւն կը կազմեն 250 դր. ողջէն վար եղող առարկայի մը աւանդագիրը :

«Պայմանագրեալ տոկոսին սակը տա- րին 9 0/0էն աւելի չ'պիտի ըլլայ : Այս տոկոսէն զատ փոխատուն կրնայ ստանալ գնահատման, չափման և պահուելու համար վարձք մը :

«Եթէ 250 դր. էն վարէ փոխատուու- թիւնը 4 0/0 պէտք է ըլլայ, իսկ 3 0/0 եթէ փոխ տրուած գումարը 250 դր. էն վեր է :

«Այս իրաւունքը մէկ տարուան հա- մար միայն կրնայ ստացուիլ՝ քանի տար- ուան որ ալ ըլլայ փոխատուութեան տեղ- ղութիւնը :

«Փոխատուութիւնները 3 կամ 6 ամ- սուան համար պիտի ըլլան, կրնան նորոգ- ուիլ փոխատուին և փոխառուին երկուս- տեք համաձայնութեամբ :

«Պայմանաժամի լրման անվճար մնա- ցած պարտոց գրաւները, ըստ վաճառակա- նական գրաւի օրինագրքի կանոններուն՝ ըստ գրամի պիտի վերածուին :

«Ասկէջ զատ 10 եգիպ. ոսկիէ աւելի փոխատուութեանց համար աւանդագիրը ստորագրող անձերուն ապահովագրեալ նա- մակ մը պէտք է զրկուի խնդրագիրը գա- տաւորին տրուելէ աւտը :

Բայց այն վայրկեանին Սէրժի Զուգակերտն մին իր սուրինը Ռուս հակային կուրծքը խօթեց եւ զօրավարը իր բոլոր ծանրութեամբը ինկաւ խոտերուն վրայ, ուր արդէն մեռելներու ու վիրաւորներու սեւ լճացեալ արեւը կը թանձ- բանար :

Ա՛լ Ռուսերուն յարձակումը կատաղի ու անողոք եղաւ, իրենց Հօր մահուան վրէժը աննշու ծարաւով սոգորուած — այսպէս կ'ան- ուանէին Սուրբ Ռուսիոյ մարտիրոս եղող Տը Բլօֆօֆ Զօրավարը — անո՛ր, որ ինքզինքը ըս- պաննել առած էր, ժէրմէնի զատակը ազա- տելու համար :

Զուգակերտը քնաջինջ եղան, լուրջովին ջախջախուեցան հրացանաբուններու ծանրութեան տակ, ուղեղները սրբնոտ կտորներով թռան ասդին անդին, գտնիլի կտորներ ցայտեցին, սկնակապիճներէ գոյսո պոռթկած աչքեր մնա- ցին դաժան, կարմիր, խոտերուն վրայ :

Սէրժ ամենէն վերջը մեռաւ սուրի հար- ուածով մը ձախ թոքէն զարնուած :

Կոմսը տեսաւ անոր իր քովը տապալիլը, գլուխը զաւկին կողմը դարձուց, ձեռքը անոր երկնցուց ու խնչոյղ ձայնով մը մըմնչեց . . .

—Քիչ ասեմէն . . . պղտիկ . . .

Սէրժ ձպիտ մը ու հառօչ մը ունեցաւ, եւ հոգին փչեց :

Զօրավարը ձեռքերուն վրայ կըթնելով գը- լուիւր վերցուց դէպի անոր կողմը, ձեռքի աչ- քերը չորս կողմը պատցուց, երկինք նայեցաւ պահ մը ու շուտով ուսերուն բովանակ ծան- րութեամբը իր հետաւոր հայրենիքին համար մեռնող սպային կարծրացած ծունքերուն վրայ փռուելով հառաչեց .

—Ին՛դճ . . . խեղճ ժէրմէն . . .

Թարգ . ԼԵՒՈՆ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալատի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն , Պրիսթլ Օլիվեր ճիշդ դիմաց , Գաֆէ Տը Լա Պուսսի կից :

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներքն են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վիսյակակներով եւ մեքայներով վարձատրուած , Երաշխատեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .


ՀԱԳԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ



ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂՐՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յասկանելին :



Ձրի դասեր և նորագուծութիւններ , ՍԻՆԿԵՐ մեքենայից համար , յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւններն մեքենայից եւ նորագութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ «ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՔԸ

Օտանիյի դեղատանին դիւնացի փողոցին մէջ .

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին .

Այցեխեր , Երջարեանքներ , Գիրքեր , Հրատարակներ , Մահագրներ , Տեղեկագիրներ , Կանոնագրեր , Տոմարներ և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններն կը վաճառուին հետեւեալ գրքերն .

1. ԲՆԱՇԽԱՐՀԻ ԲԱՌԱՐԱՆԻ Ա . և Բ . պրակներն , որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է « Արշալոյսի » մէջ :

2. ՈՐԲՈՒՆԻ , որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքի մուտքը , ինչպէս կը լսենք , արդիւում է եղեր :

3. ՀԱՒԱՔԱՅԹՈՅ Հայոց ժողովրդական երգերու , Փարիզ տպագրեալ , Տնօրինութեամբ Տ . Լևոն Եղիազարեանցի :

4. ՉՈՒԱՐՃԱԼԻ Անիքթոններ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային Կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ :

Ա Ձ Դ

Եգիպտացի ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէն մեկնած ըլլալով՝ այժմ Եգիպտոսի համար Արևելեան Մամլոյ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան , որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն . ի մասին :

Թիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական , դիտական , պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով :

Քաղաքէն հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յ'Ազգ . վարժարանն ի Տարպէլ-Կիւնէնս :

Ա . Պ Ա Լ Ե Ա Ն

Մ Ա Թ Ի Լ Տ

(Գալթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳՂՈՒՄ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլեար աւելի է :

Ս . ԼԵՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահերէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրուստրակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործաւ կատար յ'Ազգ. քանդակար

« Եթէ վաճառուէն գոյացած գումարը փոխարուած գումարը անցնի (փոխատուութեան գումարը , զանազան ծախքերը տուկոր , ամեն բան հաշուելով ,) աւելորդ գումարը փոխատուին քովը 3 տարւոյ չափ կրնայ կենալ , առանց տուկոսի , եթէ այսչափ ժամանակամիջոցին մէջ փոխատուէն չպահանջուի՝ ա՛լ փոխատուին կը մնայ :

« Առանց կառավարութեան հրամանին գրաւով փոխատուութեան տուն մը բացող և շահագործողը պիտի պատժուի 1 էն մինչև 7 օր բանտարկութեամբ : Հաստատութեան գոցուելը միշտ դատաստանով պիտի կատարուի :

« Ամէն օրինազանցութիւն պիտի պատժուի 24 ժամէն մինչև 1 շաբաթ բանտարկութեամբ և 10 էն 100 դր՝ . տուգանքով և կամ միայն այս պատժներէն մէկովը : մեղացուցիչ պարագաներ կրնան ընդունուիլ և խանութի գոցուելը կրնայ վըճարուիլ :

« Արգիլեալ է գրաւով փոխատուութիւն ընել , ըստ երեւոյթին 12 տարեկանէն վար տղոց , գինով մարդոց կամ հաշիշով գինովցած և կամ մտային խանգարեալ կարողութեան տէր մարդու մը , որ պայմանագրելու անկարող է :

« Գրաւներու գնահատութիւնը ներքին Գործոց նախարարութեան մասնաւորապէս արտօնուած մարդոց ձեռքով պիտի կատարուի :

« Գրաւ դրուած առարկայ մը եթէ գողութեան և կամ ուրիշ պատճառով պահանջուի , տէրը պարտի :

1 . Օրինաւոր կերպով իրը ըլլալը հաստատել :

2 . Վճարել թէ՛ այն գումարը և թէ՛ տուկոսները որ փոխատուին իրաւունքն է :

ՄԱՆԿԱԲԱՐՉ

ՏՐԻԻՆ ՍՈՍԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ Շարա-Ապսիոյ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն փոխադրած է Շարա Ապսիոյ Ազիզ , Ալի փաշա Եէրիֆի պարտիզին դիմաց , Անիէտ պէյ Ապսիոյ Բազարի 20 թիւ սեփականութեան մէջ :

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիբէրնակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց , աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն :

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում :

ՄԻ՝ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՒՑԻ

Գանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 'ՎՆ ի նիքէլ , կոթէն լարուող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւ տրեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ , Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և օքսիտէ ժամացոյցներ : պատի և քծնու լի գողման Բանտիւններ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Ծօնակրաքներու :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ